Հաստատում եմ
2.IX.22թ.

Ուսումնական հաստատության դասարանի ղեկավարի աշխատանքային տարեկան ծրագիր

Դասարան՝ 4-րդ

Դասվար՝ Ն. Հարությունյան

2022-2023 ուսումնական տարի

Դասղեկի աշխատանքի փուլային նկարագրություն

Ուսումնական տարվասկզբին

1.Կազմել աշակերտների անվանացանկը և տալ օպերատորին

2.Վերստուգել կամ պատրաստել դասարանի սոցիալական անձնագիրը:

3.Սպառիչ տեղեկություններհավաքելաշակերտների՝ լրացուցիչ կրթական հաստատություններում մասնակցության մասին

4.Կազմել դասարանի դաստիարակչական աշխատանքի պլան:

Ամենօրյա աշխատանք

1.Էլեկտրոնային մատյանում նշել բացակայությունները:

2.Հետևել կարգապահությանը

3.Հետևել հերթապահությանը դասարանում:

Ամենշաբաթյա աշխատանք

1.Անցկացնել դասղեկական ժամեր

2.Կատարել այլ պլանավորված աշխատանքներ

Ամենամսյա աշխատանքներ

1.Նախապատրաստել և կազմակերպել աշակերտների մասնակցությունը դպրոցական գործընթացներին

2.Օգնել դասարանական խորհրդին՝ ամփոփելու դասարանի կենսագործունեության փուլերի աշխատանքը

3.Վերահսկել դասարանի աշակերտների մասնակցությունը խմբակներում

4.Օգտվել հոգեբանական ախտորոշիչ թեստերից, հարցաշարերից, ախտորոշման այլ միջոցներից, դրանք նրբանկատորեն կիրառել դաստիարակչական աշխատանքում

Դաստիարակչական աշխատանք		
Գործառույթները	**Նպատակն ու խնդիրները**	**Ուղղվածությունը**
1.Աշակերտի սոցիալական պաշտպանության գործառույթ	1.Դասարանական կոլեկտիվի ձևավորում	1.Քաղաքացիական պատասխանատվության ձևավորում, հարգանք երկրի պատմության և մշակույթի հանդեպ
2.Կազմակերպչական գործառույթ	2.Անհատի ձևավորմանը նպաստող, յուրաքանչյուրի անհատականությունը ողջունող և ներուժը բացահայտող միջավայրի ապահովում	2.Դասեր՝ նվիրված հայրենիքին, քաղաքին
3.Աշակերտական ինքնակառավարման խթանման գործառույթ, որը երաշխավորում է նրանց ինքնուրույնության խթանումը	3.Առողջ ապրելակերպի վարքագծի ձևավորում	3.Էքսկուրսիաներ պատմական հուշարձաններ, տեսարժան վայրեր
4.Ախտորոշման գործառույթ, որը ենթադրում է աշակերտների էլակետային մակարդակի վերհանում և շարունակական համեմատության մեջ փոփոխությունների արձանագրում	4.Դասարանում համակարգված աշխատանքի կազմակերպում	3.Վնասակար սովորույթների հանդեպ բացասական վերաբերմունքի ձևավորում
6.Պլանավորման, ծրագրման գործառույթ, կանոնակարգում է մանկավարժական գործունեությունը, հեշտացնում է	5.Աշակերտների, աշակերտների ու մանկավարժների միջև բարյացակամ, ներդաշնակ փոխհարաբերությունների	4.Տարբեր խմբակների, զրույցների, բանավեճերի կազմակերպում

արդյունքների հետևողական վերահսկումը	ձևավորում 6.Աշակերտների արժեքային համակարգի ձևավորում	5. Իրավական գիտակցության և հանդուրժողականության խթանում
	7.Աշակերտների ստեղծագործական, հասարակայնամետ գործունեության կազմակերպում	

Ուսումնադաստիարակչական աշխատանքների հիմնական բովանդակությունը

Ուսումնադաստիարակչական աշխատանքների հիմնական բովանդակությունը	Ուսումնական շաբաթը	Նպատակը
Կազմակերպչական աշխատանքներ՝ .աշխատանքային պլանի կազմում .դասարանի ակտիվի ընտրություն .հերթապահության սահմանում .տարհանման պլանի ծանոթացում .անվտանգ երթևեկության կանոնների հիշեցում .տեսաֆիլմի դիտում:	1-ին շաբաթ	Մաքուր պահելՀրջապատը ծանոթանալ տարհանման պլանին, վերհիշել անվտանգ երթևեկության կանոնները.
Դասասենյակի ձևավորում, կանաչապատում, ծաղիկների խնամք, դասարանի սանիտարահիգիենիկ վիճակի պահպանում, հերթապահության սահմանում: Հանդիպում բուժքրոջ հետ. զրույց՝ «Ի՞նչ է կորոնավիրուսը, ինչպես պաշտպանվել համավարակից» թեմայով:	2-րդ շաբաթ	Սովորեցնել և խստորեն պահպանել անհատական պաշտպանության միջոցները կարանտինի ընթացքում,

.Դասագրքերի, գրենական պիտույքների ստուգում. .Զրույց «Մենք Հայկի թոռնիկներն ենք՝ անկախ Հայաստանի ապագան» թեմայով.	*3-րդ շաբաթ*	Հայոց քաջազունների օրինակով սերմանել հայրենասիրություն
.Մասնակցություն դպրոցի տարհանման աշխատանքներին. .Զրույց «Հեռավար կրթության օգտակար և վտանգավոր կողմերը»	*4-րդ շաբաթ*	Արծարծել հեռավար կրթության դրական և բացասական կողմերը
.Ելնելով պատերազմական իրավիճակից՝ զրուցել «Հայոց բանակի առյուծասիրտ կորյունները» թեմայով: .Այցելել «Անհայտ զինվորի հուշարձանին»:	*5-րդ շաբաթ*	*Ծանոթացնել երկրում տիրող իրավիճակին, իրա զեկել քաջ հայորդիների կատարած սխրանքների մասին*
.Կապակցված խոսքի զարգացում. բարեկիրթ շփում, հաղորդակցություն. .Կազմակերպել հեռավար այց դեպի տուն-թանգարաններ:	*6-րդ շաբաթ*	*Կազմակերպել հեռավար այց Հովի. Շիրազի «Տուն-թանգարան»*
.Զրույց «Խաղաղություն ողջ աշխարհին» թեմայով .Ընթերցել հատված «Մանկական Աստվածաշունչ»-ից	*7-րդ շաբաթ*	Մարդկային փոխհարաբե – ություններ, բարեկիրթ շփում. Կարդալ և մեկնաբանել հատվածներ «Աստվածաշնչից»
.Հանդիպում բուժքրոջ հետ. զրույց «Քո առողջությունը՝ անձնական հիգիենա» թեմայով, շեշտադրելով սանիտարահիգիենիկ պայմանների պահպանումը:	*8-րդ շաբաթ*	Պարզաբանել առողջութ - յան պահպանման դրույթ- ները
.Զրույց «Իմ ծննդավայրի աշունը» թեմայով.	*9-րդ շաբաթ*	Կապակցված խոսքի զարգացում. նկարագրել հայրենի բնօրրանի աշունը
. Հանդիպում դժվար դաստիարակվող երեխաների ծնողներին. . Զրույց «Համակարգիչն ընկեր է, թե՞ թշնամի» թեմայով:	*10-րդ շաբաթ*	Քննարկել համակարգչի նշանակությունը աշակեր- տի ուսումնառության գոր- ծընթացում
.Զրույց «Դպրոցի և ընտանիքի միասնությունը երեխայի դաստիարակության գործում»	*11-րդ շաբաթ*	Կարևորել ուսուցիչ-ծնող սերտ կապը երեխայի

		դաստիարակության գոր-ծում
.Հերթապահություն դասասենյակում, ծաղիկների խնամք, նախապատրաստում ձմռանը. .Զրույց «Մարդը բնության պահապանն է ու տերը»	*12-րդ շաբաթ*	Քննարկել անտեսանելի կապը կենդանի և անկենդան բնության միջև, նշել բուսականության, կենդանի աշխարհի սերտ կապը մարդու հետ
.Օգտակար և վնասակար սովորություններ. .Զրույց «Վատ սովորությունների հետևանքները»	*13-րդ շաբաթ*	Խմբավորել վատ սովորույթ ները, բնավորության վատ գծերը, աշխատել զերծ մնալ այդ սովորույթներից
.Եկեղեցական ավանդական տոներ. «Սուրբ Ծնունդ» (հեռավար)	*14-րդ շաբաթ*	Զրուցել եկեղեցական տոների, ժողովրդական ավանդույթների, արարո-ղությունների մասին. վերհիշել«Ավետիս» երգը
. Զրույց «Իմ իրավունքներն ու պարտականությունները»	*15-րդ շաբաթ*	Ստեղծել պաստառ և հետամուտ լինել առօրյա կյանքումպարտականութ-յունների կիրառմանը .
. Զրույց «Առնո Բաբաջանյանը և նրա նախասիրությունները»	*16-րդ շաբաթ*	Ունկնդրել Բաբաջանյանի «Հերոսական բալլադից» մի հատված հեղինակի կատարմամբ,
. Զրույց «Ապրենք առողջ՝պահպանելով սանիտարահիգիենիկ պայմանները»	*17-րդ շաբաթ*	Վերհիշել և խստորեն պահպանել անհատակն պաշտպանության միջոցները համավարակի պայմաններում
. Դաս-միջոցառում «Ես զինվորն եմ իմ հայրենիքի»	*18-րդ շաբաթ*	Ծանոթանալ 2001թ. հունվարի 6 որոշմանը և Հայոց բանակի անցած ուղուն
. Զրույց «Օրվա ռեժիմը և առողջությունը»	*19-րդ շաբաթ*	Կազմել օրվա ռեժիմի

		օրինակելի օրինակ և կիրառել
. Զրույց «Օգնություն թռչուններին»	*20-րդ շաբաթ*	Ընդլայնել գիտելիքները կենդանիների, բնության մասին,սերմանել սեր կենդանիների նկատմամբ
. Զրույց «Մայրենի լեզվի օր՝ գիրք-ընծա ընկերոջս»	*21-րդ շաբաթ*	Հաղորդել հետաքրքիր փաստեր լեզուների մասին
. Զրույց «Քեզ հավերժ փառք, հա՛յ զինվոր»	*22-րդ շաբաթ*	Ծանոթանալ հայ զինվորների կատարած սխրագործություններին
. Զրույց «Գիրքը մեր բարեկամն է՝ կյանքի ուղեկիցը»	*23-րդ շաբաթ*	Նշել գրքի անգնահատելի նշանակությունը, դերը մարդու կյանքում
. Զրույց «Հայրենիքը սկսվում է իմ տնից»	*24-րդ շաբաթ*	Սերմանել հայրենասիրություն և պարտավորվածություն հայրենիքի նկատմամբ
. Զրույց «Ժամանակակից տրանսպորտ՝ վտանգի մեծ և անկանխատեսելի աղբյուր»	*25-րդ շաբաթ*	Մարդկային բարեկիրթ փոխհարաբերություններ, կարգուկանոնի իմացություն, զգուշություն.
. Զրույց «Պահպանենք բնությունը՝ նպաստելով առողջության պահպանմանը»	*26-րդ շաբաթ*	Խրախուսել և սերմանել աշխատասիրություն, սեր և խնամք բնության նկատմամբ
. Զրույց «Մայրիկի օրը մեր ընտանիքում», «Օգնություն մայրիկիս»	*27-րդ շաբաթ*	Երեխաների ուշադրությունը սևեռել մայրիկի կատարած աշխատանքներին, առօրյա հոգսերին
. Զրույց «Սիրելի գրքի էջերով»	*28-րդ շաբաթ*	Ընթերցել և մեկնաբանել հատվածներ

		«Աստվածաշնչից»
. Զրույց «Պահպանենք վարվեցողության կանոնները»	29-րդ շաբաթ	Մեկնաբանել աշակերտի պահվածքը դպրոցում, տանը, հյուր գնալիս.
. Զրույց «Մենք առողջ ապրելակերպի կողմնակիցներ ենք»	30-րդ շաբաթ	Կարևորել սպորտի դերը մարդու կյանքում.
. Զրույց «Հայրենիքի' նահատակներ, խոնարհվում ենք ձեր առջև»	31-րդ շաբաթ	Զրույց մայիսյան հաղթանակների մասին
. Զրույց «Մեր մոտակա և հեռահար երազանքները»	32-րդ շաբաթ	Զրուցել նպատակներին հասնելու ձգտման, ուղիների մասին
.Զրույց «Խաղաղություն ողջ աշխարհին»	33-րդ շաբաթ	Ստեղծել պաստառ
.Դասագրքերի ստուգում, վերանորոգում, նախապատրաստում գրադարան հանձնելուն	34-րդ շաբաթ	Զրույց

Ծնողական ժողովներ

Անցկացման օրը	Քննարկվող հարցերը	Համառոտ բովանդակությունը
սեպտեմբեր	1. 2022-2023ուստարվա անելիքներ, քննարկումներ ուսումնամնա – դաստիարակչական հարցերի շուրջ: 2. Ծնողկոմիտեի ընտրություն: 3.. Կազմակերպչական հարցեր:	Ուսուցման կազմակերպման նոր կանոնները, դպրոց հաճախելու ժամանակացույցը և կանոնները, ծնողկոմիտեի ընտրություն, կազմակերպական հարցեր՝ կապված ուսուցման, անձնային դրսևորումների և այլ խնդիրների հետ:

դեկտեմբեր	1. Կազմակերպչական հարցեր. անհարկի բացակայություններ, առաջադիմության և կարգապահության բարելավում. 2. Լրացուցիչ խորհրդատվական անվճար պարապմունքներ հետ մնացող աշակերտների համար. 3. Ներառական կրթության կազմակերպումը դպրոցում. 4. Ընթացիկ հարցեր.	Տանել հետևողական աշխատանք բացակայութ - յունների դեմ, կազմակերպել շերտավորված աշխատանք աշակերտների վարքի, առաջադի- մության բարելավման համար, ներառական կրթությունը կազմակերպել ըստ նախատես- ված ծրագրի, ժամանակին իրականացնել երեխաներին տրամադրվող սննդի արկղերի բաշխումը :
փետրվար	1. 2022-2023 ուսումնական տարվա I կիսամյակի արդյունքների ամփոփում և քննարկում: (հաղորդող՝ Ա. Տոնոյան) 2. Խորհրդատվություն ծնողներին. II կիսամյակի ուսումնական ծրագրի մեկնաբանում, առաջադիմության բարձացման ուղիների քննարկում: (հաղորդող՝ Ա. Տոնոյան) 3. Նախապատրաստական աշխատանքներ՝ առաջիկա գիտելիքների ստուգմանը պատշաճ մակարդակով մասնակցելու համար: (հաղորդող՝Ա. Տոնոյան)	Առաջին կիսամյանկի արդյունքների ամփոփում ՈՒշադրություն դարձնել առաջադիմությանը և պայքար տանել անհարգելի բացակայությունների դեմ: Առաջիկա գիտելիքների ստուգմանը մասնակցել պատշաճ մակարդակով